ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 19** քաղ. Սանկտ Պետերբուրգ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների եւ իրականացման փուլերի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 86-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության՝ կից ներկայացվող հիմնական ուղղությունները (այսուհետ՝ հիմնական ուղղություններ) եւ իրականացման փուլերը։

2. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝

տրանսպորտի զարգացման բնագավառում կարճաժամկետ եւ երկարաժամկետ ազգային ռազմավարություններ (պլաններ, ծրագրեր) պատրաստելիս եւ իրականացնելիս հաշվի առնել հիմնական ուղղությունները,

միջոցներ ձեռնարկել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տրանսպորտի բոլոր տեսակներով փոխադրումներ կատարելիս մինչեւ 2025 թվականն առկա սահմանափակումները հանելու կապակցությամբ։

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ համատեղ՝

ապահովել Հիմնական ուղղությունների հաջորդական փուլային իրականացումն այն միջոցառումների («ճանապարհային քարտեզներ») պլանների հիման վրա, որոնք յուրաքանչյուր երեք տարվա համար հաստատվում են Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից՝ հաշվի առնելով դրանցում այն միջոցառումների հնարավոր ընդգրկումը, որոնք դուրս են համապատասխան եռամյա ժամանակաշրջանից, ինչպես նաեւ այն պլանները, որոնք տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկա ստեղծելիս թույլատրում են անդամ պետությունների կողմից դրանց իրականացման համար տարբեր արագությունների հնարավորություն։

մշակել օդային տրանսպորտի հարցերով միջոցառումների պլան («ճանապարհային քարտեզ») (նշելով հստակ փուլերը, միջոցառումները եւ ժամկետները), եւ մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ը այն ներկայացնել Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը։

մշակել Հիմնական ուղղությունների իրականացման միջոցառումների պլան («ճանապարհային քարտեզ») (նշելով հստակ փուլերը, միջոցառումները եւ ժամկետները), եւ մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը այն ներկայացնել Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը։

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի 2016 թվականի
դեկտեմբերի 26-ի թիվ 19 որոշմամբ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունները եւ իրականացման փուլերը

I. Ընդհանուր դրույթներ

Սույն Հիմնական ուղղությունները մշակվել եւ իրականացվում են՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրին (այսուհետ՝ «Միության մասին» պայմանագիր), ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին ու խնդիրներին համապատասխան։

Սույն Հիմնական ուղղություններով որոշվում են ավտոմոբիլային, օդային, ջրային եւ երկաթուղային տրանսպորտի միասնական տրանսպորտային տարածքի եւ Միության տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի հետագա ձեւավորման եւ զարգացման պայմաններն ու փուլերը՝ հաշվի առնելով միջազգային իրավական կարգավորման տարբերությունները, տրանսպորտի տարբեր տեսակների տեխնոլոգիական առանձնահատկությունները եւ անդամ պետությունների տրանսպորտային ենթակառուցվածքի վիճակը։

Միությունն ունի բարձր տնտեսական ներուժ, անդամ պետությունների տնտեսությունների միասնական ծավալը կազմում է ԱՄՆ-ի 2,2 տրիլիոն դոլարից ավելին։ Դրա հետ մեկտեղ, տնտեսական աճի բարձրացման համար պահանջվում է տրանսպորտային ծառայությունների առաջանցիկ զարգացում՝ ապրանքների

արտադրության մեծացող ծավալի պայմաններում փոխադրումների աճող պահանջարկի բավարարման համար։ Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ արդյունաբերական արտադրության աճը 1 տոկոսով առաջացնում է փոխադրումների ծավալի մեծացում՝ 1,5 - 1,7 տոկոսով։

Անդամ պետությունների բարենպաստ աշխարհագրական դիրքը՝ այնպիսի համաշխարհային տնտեսական դերակատարների եւ շուկաների միջեւ, ինչպիսիք Եվրոպական միության եւ Հարավ-արեւելյան Ասիայի երկրները, Չինաստանն են, դրանց մոտ առաջացնում է շահագրգռվածություն Միության հետ ինտեգրման զարգացման հարցում, այդ թվում՝ Միության եւ Մետաքսե ճանապարհի տնտեսական գոտու կառուցման գործընթացների միակցմանն առնչվող նախաձեռնությունների շրջանակներում։

Անդամ պետությունների միջեւ տնտեսական կապերն ապահովվում են տրանսպորտի գործնականորեն բոլոր տեսակներով, որոնց զարգացումն իրականացվում է տնտեսության այլ ճյուղերի հետ փոխգործակցությամբ (մեքենաշինություն, վառելիքային էներգետիկա, ագրարային արդյունաբերություն, շինարարություն, լեռնային մետաղագործություն, գյուղատնտեսություն եւ այլն), ինչը տնտեսական աճի կարեւոր գործոններից մեկն է։

Անդամ պետությունները հետեւողականորեն զարգացնում են իրենց տրանսպորտային համալիրների առկա ներուժը՝ սույն Հիմնական ուղղություններին համապատասխան։

Անդամ պետություններն ինքնուրույն մշակում, ձեւավորում եւ իրականացնում են ազգային տրանսպորտային քաղաքականություն, այդ թվում՝ ընդունում են տրանսպորտի զարգացման ազգային այնպիսի ծրագրեր եւ տրանսպորտային քաղաքականության իրականացման այլ միջոցներ, որոնք չեն հակասում սույն Հիմնական ուղղություններին։

Սույն Հիմնական ուղղությունների դրույթներով չեն շոշափվում անդամ պետությունների՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց մասնակիցներն են իրենք։

Սույն Հիմնական ուղղությունների նպատակներով օգտագործվում են հետեւյալ հասկացությունները, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

եվրասիական տրանսպորտային միջանցք՝ այն երթուղիների ամբողջությունը, որոնք, այդ թվում, ինտեգրված են անդամ պետությունների տարածքներով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների ցանցում, եւ որոնք միջազգային հաղորդակցության մեջ ապահովում են ուղեւորների եւ բեռների փոխադրումը՝ դրանց առավել մեծ կենտրոնացվածության ուղղություններով, ինչպես նաեւ այդ փոխադրումների իրականացման տեխնոլոգիական եւ կազմակերպաիրավական պայմանների ամբողջությունը.

ինտելեկտուալ տրանսպորտային համակարգ՝ ժամանակակից տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների ու ավտոմատացման միջոցների՝ տրանսպորտային ենթակառուցվածքի, տրանսպորտային միջոցների եւ օգտագործողների հետ ինտեգրումը, որն ուղղված է տրանսպորտային գործընթացի անվտանգության եւ արդյունավետության բարձրացմանը.

ուղղակի-խառը փոխադրում՝ ամբողջ երթուղու համար ձեւակերպված՝ փոխադրման միասնական փաստաթղթով տրանսպորտի երկու կամ ավելի տեսակներով փոխադրումը։

Սույն Հիմնական ուղղություններում օգտագործվող այլ հասկացություններ ընկալվում են «Միության մասին» պայմանագրով սահմանված իմաստներով։

II. Անդամ պետությունների Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղություններն ու իրականացման փուլերը

Անդամ պետություններն իրականացվում են համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականություն, որն ուղղված է միասնական տրանսպորտային տարածքի հետեւողական եւ փուլային ձեւավորմանը՝ մրցակցության, բաց լինելու, անվտանգության, հուսալիության,

հասանելիության, էկոլոգիականության սկզբունքների հիման վրա եւ Միության տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ստեղծմանը, որտեղ ստեղծվում են տրանսպորտային ծառայությունների մատուցման հավասար (պարիտետային) պայմաններ՝ հաշվի առնելով «Միության մասին» պայմանագրով նախատեսված առանձնահատկությունները։

Սույն Հիմնական ուղղություններն իրականացվում են անդամ պետությունների կողմից փուլային եղանակով, հաշվի առնելով՝

«Միության մասին» պայմանագրում ամրագրված՝ անդամ պետությունների՝ տրանսպորտի հարցերով պայմանավորվածությունները.

անդամ պետություններից յուրաքանչյուրի ազգային շահերը, դրանց տնտեսական զարգացման մակարդակը, տրանսպորտային ծառայությունների ազգային շուկայի զարգացման աստիճանը.

տնտեսության տրանսպորտային հատվածի կարգավորման առանձնահատկությունները եւ դրա ճյուղերի յուրահատկությունները.

անդամ պետությունների՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելիս, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունները.

անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ տրանսպորտային ծառայությունների համաշխարհային շուկայում ընդհանուր առավելությունների ապահովման նպատակով՝ ընդհանուր մոտեցումների մշակման եւ կիրառման հնարավորությունները։

Սույն Հիմնական ուղղությունների առանձին դրույթներն իրականացվում են միջազգային պայմանագրերի կնքման եւ Միության մարմինների կողմից ակտերի ընդունման միջոցով։

Անդամ պետությունները փուլային եղանակով անցկացնում են միասնական տրանսպորտային տարածքի ձեւավորմանը եւ Միության տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ստեղծմանն ուղղված միջոցառումներ՝

ելնելով ճյուղային զարգացման առանձնահատկություններից եւ տրանսպորտի առանձին տեսակների համար՝ «Միության մասին» պայմանագրում ամրագրված դրույթներից։

Անդամ պետություններն իրականացնում են ավտոմոբիլային, օդային, ջրային եւ երկաթուղային տրանսպորտի ոլորտում՝ Միության տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ստեղծմանն ուղղված համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականություն՝ հաշվի առնելով սույն Հիմնական ուղղությունների համապատասխան բաժինների դրույթները։

Ազատականացման կարգը, պայմանները եւ փուլայնությունը սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով։ Ընդ որում, առանձին անդամ պետությունների համար կարող են նախատեսվել ազատականացման առավել ուշ ժամկետներ, ինչն այլ անդամ պետությունների համար Միության տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ձեւավորման մասով գործունեություն իրականացնելու խոչընդոտ չէ։

Սույն Հիմնական ուղղությունների նպատակներն իրագործվում են հետեւյալ խնդիրների լուծման միջոցով՝

տրանսպորտի ոլորտում ընդհանուր առավելությունների ապահովմանն ուղղված համաձայնեցված միջոցների ընդունում եւ միջազգային լավագույն փորձի իրագործում, այդ թվում՝ Եվրոպայի եւ Ասիայի միջեւ տարանցիկ տրանսպորտատնտեսական կապեր հաստատելիս աջակցություն Միության աշխարհագրական առավելությունների՝ ավելի լիակատար իրականացմանը, միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրություն, վերլուծություն եւ համաձայնեցված ներդրում.

անդամ պետությունների տրանսպորտային համակարգերի ինտեգրումը միջազգային տրանսպորտային համակարգին, ինչի շրջանակներում անդամ պետությունները՝

սահմանում են տրանսպորտի բնագավառում այն միջազգային պայմանագրերի ցանկը, որոնցով հնարավոր է համակարգված դիրքորոշումների մշակումը՝ միջազգային կազմակերպություններում անդամ պետությունների շահերը հաշվի առնելու նպատակով.

ստեղծում են պայմաններ անդամ պետությունների տրանսպորտային գործունեությամբ զբաղվող սուբյեկտների կողմից տրանսպորտային ծառայությունների արտահանման ծավալների մեծացման եւ աշխարհագրության ընդլայնման համար.

իրագործում են համատեղ նախագծեր տրանսպորտի եւ ենթակառուցվածքի ոլորտում՝ Միության կառուցման գործընթացը միջազգային տրանսպորտային նախաձեռնությունների հետ միակցելու շրջանակներում.

Միության կողմից իր տարանցիկ ներուժի արդյունավետ օգտագործումը, ինչը նախատեսում է՝

տրանսպորտային ենթակառուցվածքի գրավչության բարձրացում.

օպտիմալ պայմաններ (ճկուն, գրավիչ սակագներ, հսկողության տեսակների օպտիմալացում եւ պարզեցում, լոգիստիկ տեխնոլոգիաների կատարելագործում եւ այլն)՝ ուղեւորների եւ բեռների միջազգային փոխադրում իրականացնելու համար.

այնպիսի ծրագրերի մշակում եւ իրագործում, որոնք նպաստում են ուղեւորների եւ բեռների տարանցիկ ու բազմամոդալ փոխադրումների զարգացմանը.

տրանսպորտային միջոցների որակի բարձրացում հետեւյալ միջոցներով՝

ուղեւորային եւ բեռնային փոխադրումների բնագավառում հաջող առաջադեմ եւ միջազգային լավագույն փորձի ներդրում, ուղեւորների համար տրանսպորտային հասանելիության, կանոնավորության եւ հարմարավետության ապահովում, բեռների առաքման ոլորտում առաջադեմ լոգիստիկ տեխնոլոգիաների կիրառում.

շարժակազմի նորացման համար պայմանների ստեղծում.

ուղեւորային փոխադրումների ծառայություններից օգտվողների տեղեկատվական ապահովման համակարգերի զարգացում.

պայմանների ստեղծում սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով անձանց՝ տրանսպորտային ենթակառուցվածքին եւ հասարակական ուղեւորատար տրանսպորտի տրանսպորտային միջոցներին անարգել, հարմարավետ եւ անվտանգ հասանելիության համար.

տրանսպորտում անվտանգության ապահովում, այդ ոլորտում անդամ պետությունների օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ հաշվի առնելով միջազգային այն պայմանագրերի դրույթները, որոնց մասնակիցներն են անդամ պետությունները.

շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա տրանսպորտի վնասակար ներգործության նվազեցում, վառելիքի այլընտրանքային տեսակների եւ էներգիայի վերականգնվող աղբյուրների ներդրում՝ ջերմոցային գազերի արտանետման նվազեցման եւ տնտեսող ու էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցների կիրառման մասնաբաժնի մեծացման նպատակով.

բարենպաստ ներդրումային միջավայրի ձեւավորում, տրանսպորտի ոլորտում նախագծերի զարգացման գործում կապիտալ ներդրումների ներգրավման խթանում, այդ թվում՝ նորարական տեխնոլոգիաների մշակման եւ ներդրման, փոխադրումների ռեսուրսատարության եւ շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության նվազեցման, պետական-մասնավոր գործընկերության եւ կոնցեսիոն համաձայնագրերի մեխանիզմների լայն գործնական ներդրման, ինչպես նաեւ ներդրումային գրավչությունը բարձրացնելու համար այլ պայմանների ստեղծման միջոցով:

Սույն Հիմնական ուղղություններն իրագործվում են հետեւյալ առաջնահերթությունները հաշվի առնելով՝

եվրասիական տրանսպորտային միջանցքների ստեղծումն ու զարգացումը հետեւյալ եղանակներով՝

անդամ պետությունների կողմից՝ տրանսպորտային միջանցքների եւ երթուղիների համաձայնեցված սահմանում.

անդամ պետությունների առաջարկությունների հիման վրա տրանսպորտային միջանցքների եւ երթուղիների ցանկի կազմում՝ Միության մարմնի կողմից դրա հաստատմամբ.

եվրասիական տրանսպորտային միջանցքների տեխնոլոգիական համատեղելիության ապահովում.

երթեւեկության պլանավորման համակարգում եւ կարգավորում.

գրավիչ եւ ճկուն սակագնային պայմանների համաձայնեցում.

մաքսային եւ հսկողության այլ ձեւերի հետ կապված ընթացակարգերի պարզեցում.

ուղղակի խառը փոխադրումների զարգացում.

ինտելեկտուալ տրանսպորտային համակարգերի (այդ թվում՝ տեղեկատվական համակարգեր) ներդրում եւ ժամանակակից այնպիսի տեխնիկական միջոցների (տեխնիկական հագեցվածություն) կիրառում, որոնք թույլ են տալիս հեշտացնել ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվության փոխանցումը.

ժամանակակից ճանապարհային եւ ճանապարհամերձ ծառայության զարգացում.

Միության շրջանակներում տարանցիկ փոխադրման ներուժի օգտագործում եւ զարգացում, եվրասիական տրանսպորտային կապերի ընդլայնմանն ուղղված միջոցների մշակում եւ իրագործում, տարանցման ազատության ապահովում՝ հաշվի առնելով տրանսպորտի տարբեր տեսակների զարգացման հարցերով՝ անդամ պետությունների պայմանավորվածությունները, ուղեւորների եւ բեռների տեղափոխման վրա ազդող խոչընդոտների վերացում եւ ընթացակարգերի պարզեցում.

տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման համակարգում, որի շրջանակներում անդամ պետությունները՝

փոխադարձաբար տեղեկացնում են տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտների ստեղծման կամ կատարելագործման վերաբերյալ՝ իրագործման նպատակով պլանավորվող նախագծերի մասին.

ապահովում են անդամ պետություններում տրանսպորտային ենթակառուցվածքի օբյեկտների ստեղծման՝ իրագործվող եւ իրագործման նպատակով պլանավորվող նախագծերի համաձայնեցվածությունն արդյունաբերանորարարական ենթակառուցվածքի օբյեկտների (արդյունաբերական կլաստերներ, արդյունաբերական պարկեր եւ տեխնոպարկեր) զարգացման՝ իրագործման նպատակով պլանավորվող կոոպերացիոն նախագծերի հետ։

ապահովում են հարակից ենթակառուցվածքի «նեղ հատվածների» վերացում, կցվանքային կետերի եւ անցակետերի տեխնիկական հագեցվածություն՝ հաշվի առնելով տնտեսական նպատակահարմարությունը.

այնպիսի լոգիստիկ կենտրոնների եւ տրանսպորտային կազմակերպությունների ստեղծում, որոնք ապահովում են փոխադրման գործընթացների օպտիմալացում, անդամ պետությունների տրանսպորտային-լոգիստիկ ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ազգային նախագծերի եւ ծրագրերի իրագործման վերաբերյալ փոխադարձ տեղեկացում, տրանսպորտային-լոգիստիկ ծառայությունների համաշխարհային շուկայում անդամ պետությունների մասնաբաժնի ավելացում.

կադրային ներուժի ներգրավում եւ օգտագործում՝ տրանսպորտի բնագավառում բարձր մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների ռացիոնալ օգտագործման համար պայմանների ստեղծման, մասնագետների նկատմամբ մասնագիտական եւ որակավորման պահանջների ներդաշնակեցման, կրթության ոլորտում համագործակցության զարգացման, ինչպես նաեւ

մասնագետների պատրաստման, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման, կադրերի պատրաստում եւ անձնակազմի որակավորման բարձրացում ապահովող մրցունակ կենտրոնների զարգացման միջոցով.

տրանսպորտի ոլորտում գիտության եւ նորարարությունների զարգացում, այդ թվում՝

համատեղ հետազոտությունների պլանավորման եւ անցկացման համար պայմանների ստեղծում՝ նորարարական տեխնոլոգիաների եւ ինտելեկտուալ տրանսպորտային համակարգերի, էներգախնայող տեխնոլոգիաների, էկոլոգիապես մաքուր («կանաչ») տեխնոլոգիաների, այդ թվում՝ վառելիքի այլընտրանքային տեսակների օգտագործումն ընդլայնող եւ ջերմոցային գազերի արտանետման ծավալի նվազեցման հնարավորություն տվող տեխնոլոգիաների, ճեպընթաց եւ արագընթաց տրանսպորտային համակարգերի, նավագնացական արբանյակային համակարգերի GPS/ԳԼՈՆԱՍՍ, փոխադրումների կազմակերպման տեղեկատվական տեխնոլոգիաների, անօդաչու տրանսպորտային միջոցների մշակման եւ ներդրման նպատակով.

ժամանակակից, մրցունակ գիտակրթական համատեղ կենտրոնների ստեղծում եւ զարգացում.

գիտատեխնիկական համագործակցության, տեղեկատվության, առաջադեմ փորձի փոխանակման («նոու-հաու») ընդլայնում՝ տրանսպորտային տեխնոլոգիաների զարգացման նպատակով։

Ավտոմոբիլային տրանսպորտը

Ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 13 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից մեկի

տարածքում գրանցված փոխադրողների կողմից Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետության տարածքում գտնվող կետերի միջեւ բեռների ավտոմոբիլային փոխադրումների իրականացման փուլային ազատականացման՝ 2016-ից մինչեւ 2025 թվականն ընկած ժամանակահատվածի համար ծրագիրը»։

Ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

Ինտելեկտուալ տրանսպորտային համակարգերի զարգացումը։

Իրագործման փուլերը՝

անդամ պետություններում առկա ինտելեկտուալ տրանսպորտային համակարգերի վերլուծություն.

ազգային ինտելեկտուալ տրանսպորտային համակարգերի փոխգործակցության վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում.

ազգային ինտելեկտուալ տրանսպորտային համակարգերի փոխգործակցության կատարելագործում։

Ուղեւորային փոխադրումների զարգացումը։

Իրագործման փուլերը՝

անդամ պետություններում ուղեւորային փոխադրումների շուկայի ընթացիկ վիճակի վերլուծություն.

ավտոմոբիլային ուղեւորային փոխադրումների կազմակերպման եւ հսկողության կատարելագործման վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում.

ուղեւորային փոխադրումների ծառայությունների շուկայի տեղեկատվական ապահովման ստեղծում ու զարգացում։

Ավտոմոբիլային ճանապարհների ենթակառուցվածքների զարգացում եւ պահպանվածության ապահովում։

Իրագործման փուլերը՝

Եվրասիական տրանսպորտային միջանցքների մեջ մտնող՝ անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների շահագործման բնութագրերի վերլուծության անցկացում.

վերլուծության հիման վրա՝ սահմանային թույլատրելի զանգվածների, սռնու բեռնվածության, ավտոտրանսպորտային միջոցների եզրաչափքերի նկատմամբ ներկայացվող համաձայնեցված պահանջների եւ եվրասիական տրանսպորտային միջանցքներով երթեւեկության համար դրանց կիրառումն սկսելու ժամկետների սահմանում.

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 827 որոշմամբ ընդունված՝ Մաքսային միության՝ «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 014/2011) տեխնիկական կանոնակարգին համապատասխան՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնելիս սահմանային թույլատրելի զանգվածների, սռնու բեռնվածության, ավտոտրանսպորտային միջոցների եզրաչափքերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանում.

խոշորաեզրաչափ եւ (կամ) ծանրաքարշ ավտոտրանսպորտային միջոցների՝ անդամ պետությունների տարածք (տարածքով, տարածքից) մուտքի (ելքի) եւ տեղափոխման նկատմամբ հսկողության մեխանիզմի կատարելագործում՝ հաշվի առնելով այն անդամ պետությունների օրենսդրությունը, որոնց ավտոմոբիլային ճանապարհներով է իրականացվում երթեւեկությունը՝ ավտոտրանսպորտային միջոցների թույլատրելի քաշային եւ եզրաչափքային պարամետրերի մասով.

ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասով պահանջների կատարելագործում։

Ավտոտրանսպորտային ծառայությունների որակի եւ անդամ պետությունների տարանցիկ ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում։

Իրագործման փուլերը՝

այն խոչընդոտների հայտնաբերում եւ վերացում, որոնք խոչընդոտում են անդամ պետությունների միջեւ ավտոմոբիլային հաղորդակցության զարգացումն ու ավտոմոբիլային տրանսպորտի ծառայությունների մատուցումը.

եվրասիական տրանսպորտային միջանցքների եւ տրանսպորտային ենթակառուցվածքի, այդ թվում՝ ճանապարհային եւ ճանապարհամերձ ծառայության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում.

մեկ անդամ պետության փոխադրողների համար այլ անդամ պետությունների տարածքով տարանցման ազատության ապահովում: Այնպիսի ապրանքների համար, որոնց նկատմամբ անդամ պետություններից մեկը միակողմանիորեն ընդունել է սահմանափակման միջոցներ, այդպիսի տարանցման ազատությունն ապահովվում է դրանց տեղափոխման հետագծելիության մեխանիզմի ներդրման պայմանով.

եվրասիական տրանսպորտային միջանցքներով միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնելիս ծանրաքարշ եւ (կամ) խոշորաեզրաչափ ավտոտրանսպորտային միջոցների անցնելու եւ վտանգավոր բեռներ փոխադրելու համար հատուկ թույլտվությունների ձեւակերպման եւ տրամադրման ընթացակարգերի սինխրոնացման հարցերով՝ անդամ պետությունների իրավասու մարմինների փոխգործակցության կազմակերպում.

Միության արտաքին սահմանին երրորդ երկրների փոխադրողների հետ առաջացող վիճելի իրավիճակների կարգավորման, Միության տարածքում միջազգային ավտոմոբիլային փոխադրումների պայմանների կատարման նկատմամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում ավտոտրանսպորտային միջոցների վերադարձի առկա պրակտիկայի ուսումնասիրություն եւ ընդհանուր մոտեցումների մշակում (անհրաժեշտության դեպքում).

անդամ պետությունների ավտոտրանսպորտային միջոցների հավաքակայանի վիճակի վերլուծություն, դրա նորացմանն ուղղված բարենպաստ պայմանների ստեղծման համար համաձայնեցված միջոցների մշակում եւ կիրառում։

Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրականացման հետ կապված աշխատակիցների մասնագիտական իրավասության ապահովում։

Իրագործման փուլերը՝

միջազգային ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման համար պատասխանատու վարորդների եւ մասնագետների մասնագիտական պատրաստվածության հարցերը կարգավորող՝ անդամ պետությունների օրենսդրության վերլուծություն.

մասնագետներին ներկայացվող մասնագիտական եւ որակավորման պահանջների ներդաշնակեցմանն առնչվող համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում.

անդամ պետությունների՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնող՝ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի աշխատակիցներին ներկայացվող մասնագիտական եւ որակավորման պահանջների ներդաշնակեցում՝ ընդունված համաձայնեցված մոտեցումների հիման վրա, կրթությունը եւ անհրաժեշտ որակավորման առկայությունը հաստատող փաստաթղթին, համապատասխան ուսումնական կենտրոններին եւ կրթական կազմակերպություններին, կրթության որակի հսկողությանը եւ դրա գիտամեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջների ներդաշնակեցում։

Օդային տրանսպորտը

«Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության («Միության մասին» պայմանագրի թիվ 24 հավելված) մասին» արձանագրության

III բաժնի համաձայն՝ Միությունում օդային տրանսպորտի զարգացման համար նախատեսվում է օդային տրանսպորտի ծառայությունների ընդհանուր շուկայի փուլային ձեւավորում։

Անդամ պետությունների միջեւ օդային հաղորդակցությունը կարգավորվում է միջազգային պայմանագրերի դրույթներով, այդ թվում՝ երկկողմանի։

Անդամ պետությունների քաղաքացիական ավիացիայի զարգացումը, անդամ պետությունների միջեւ ավիափոխադրումների հարցերով միջազգային համագործակցության կազմակերպումը եւ համակարգումն իրականացվում են Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին 1944 թվականի դեկտեմբերի 7-ի Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) շրջանակներում։

Օդային տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունները հետեւյալն են։

Անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցումը՝ քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային իրավունքի նորմերին եւ սկզբունքներին համապատասխան։

Իրագործման փուլերը՝

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) ստանդարտներին եւ առաջարկվող պրակտիկային համապատասխանության մասով՝ քաղաքացիական ավիացիայի բնագավառում անդամ պետությունների օրենսդրության վերլուծություն.

քաղաքացիական ավիացիայի բնագավառում անդամ պետությունների օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում.

քաղաքացիական ավիացիայի բնագավառում անդամ պետությունների նորմատիվ իրավական բազայի համապատասխանեցնումն ընդունված համաձայնեցված մոտեցումներին։

Շրջակա միջավայրի վրա քաղաքացիական ավիացիայի բացասական ազդեցության նվազեցում։

Իրագործման փուլերը՝

անդամ պետությունների ավիացիոն ընկերությունների օդանավերի համակազմի՝ ԻԿԱՕ-ի պահանջներին համապատասխանության գնահատումը՝ ավիացիոն աղմուկի մասով։

օդանավերի շահագործման վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում՝ հաշվի առնելով անդամ պետություններում կանոնավոր օդային հաղորդակցությունների ժամանակ ավիացիոն աղմուկի մասով ԻԿԱՕ-ի պահանջները։

Արդար եւ բարեխիղճ մրցակցության ապահովում։

Իրագործման փուլերը՝

քաղաքացիական ավիացիայի բնագավառում այնպիսի խոչընդոտների (խնդրահարույց հարցեր) հայտնաբերում եւ վերացում, որոնք խոչընդոտում են անդամ պետությունների միջեւ օդային տրանսպորտով փոխադրումների շուկայում մրցակցության զարգացումը.

իրականացվող սակագնային քաղաքականության եւ աերոնավիգացիոն սպասարկման ու անդամ պետությունների օդանավակայանների ծառայությունների համար կիրառվող կարգավորվող սակագների, ինչպես նաեւ անդամ պետությունների օդանավակայանների եւ աերոնավիգացիայի ծառայությունների հասանելիության պայմանների վերլուծություն.

օդանավակայանների եւ աերոնավիգացիայի ծառայություններ մատուցելիս հավասար (ոչ խտրական) սակագնային պայմանների կիրառման վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում.

անդամ պետությունների միջեւ կանոնավոր օդային փոխադրումներ կատարելիս օդային հաղորդակցության մասին միջազգային պայմանագրերին

համապատասխան նշանակված եւ լիազորված՝ անդամ պետությունների ավիաընկերությունների համար ոչ հավասար (խտրական) պայմանների ստեղծման, ինչպես նաեւ օդային տարածքի օգտագործման համար անդամ պետությունների ավիաընկերություններից լրացուցիչ վճարների գանձումը թույլ չտալը.

անդամ պետությունների միջազգային օդանավակայաններում ոչ առեւտրային նպատակներով՝ այլ անդամ պետության ավիաընկերություններին տեխնիկական վայրէջքի համար իրավունքի անխոչընդոտ տրամադրում.

անդամ պետությունների ավիաընկերությունների համար օդանավակայանների վերգետնյա ենթակառուցվածքներին հավասար (ոչ խտրական) հասանելիության ապահովում, այդ թվում՝ անդամ պետությունների ավիաընկերությունների համար օդանավակայանների եւ աերոնավիգացիայի ծառայություններին հասանելիության կարգավորման վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում՝ այնպիսի պայմաններով, որոնք ոչ պակաս բարենպաստ են, քան այն պայմանները, որոնք ստեղծվել են այն անդամ պետությանը պատկանող ավիաընկերության համար, որի տարածքում մատուցվում են օդանավակայանների եւ աերոնավիգացիայի ծառայություններ։

Օդանավերի համակազմի նորացման, օդանավակայանների վերգետնյա ենթակառուցվածքների օբյեկտների արդիականացման եւ զարգացման նպատակով պայմանների ստեղծում՝ ԻԿԱՕ-ի ստանդարտներին եւ առաջարկվող պրակտիկային համապատասխան։

Իրագործման փուլերը՝

անդամ պետությունների օդանավերի համակազմի վիճակի, նորացման խնդիրների, օդանավերի համալրման եւ արդիականացման վերլուծություն.

այնպիսի բարենպաստ պայմանների ստեղծում (այդ թվում՝ մաքսասակագնային կարգավորման, մաքսային վարչարարության եւ այլ ոլորտներում), որոնք նպաստում են օդանավերի համակազմի նորացմանը, ինչպես

նաեւ օդանավերի եւ (կամ) դրանց ավիացիոն շարժիչների վերանորոգման եւ (կամ) տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ օդանավերի շարժիչների, պահեստամասերի եւ սարքավորումների ներմուծմանը.

անդամ պետությունների կողմից ավիացիոն ենթակառուցվածքում ներդրումներ ներգրավելու համար բարենպաստ պայմանների ստեղծում.

օդանավակայանների ենթակառուցվածքի, աերոդրոմային սարքավորումների, օդանավերի թռիչքների աերոնավիգացիոն եւ ռադիոտեխնիկական ապահովման զարգացում եւ արդիականացում։

Թռիչքների անվտանգության եւ ավիացիոն անվտանգության ապահովում։

Իրագործման փուլերը՝

թռիչքների անվտանգությունն ու ավիացիոն անվտանգությունն ապահովելիս ԻԿԱՕ-ի կողմից առաջարկվող պրակտիկայի եւ ստանդարտների կիրառում.

անդամ պետությունների ավիացիոն ընկերությունների օդանավերի համակազմի՝ Կոնվենցիայի 6-րդ հավելվածով նախատեսված պահանջներին համապատասխանության գնահատում.

անցումային շրջանի սահմանում այն օդանավերի համակազմի փոխարինման համար, որոնք չեն համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հավելվածով նախատեսված պահանջներին.

այն օդանավերի շահագործման արգելում, որոնք չեն համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հավելվածով նախատեսված պահանջներին.

ավիացիոն իրադարձությունների ինտեգրված տեղեկատվական տվյալների բազայի ստեղծում՝ անդամ պետությունների թռիչքների անվտանգության կառավարման համակարգերի համար.

անդամ պետություններում օդային երթեւեկության սպասարկման համակարգերի ներդաշնակեցում՝ «անկար» օդային տարածք ստեղծելու նպատակով։

Օդային հաղորդակցության ընդլայնում։

Իրագործման փուլերը՝

անդամ պետությունների միջեւ օդային հաղորդակցությանն առնչվող առկա սահմանափակումների վերլուծություն.

միջոցառումների պլանի («ճանապարհային քարտեզի») հիման վրա օդային տրանսպորտի ծառայությունների ընդհանուր շուկայի փուլային ձեւավորում՝ սույն Հիմնական ուղղությունների իրագործման նպատակով։

Ջրային տրանսպորտ

Ջրային տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունները հետեւյալն են։

Ծովային տրանսպորտ

Իրագործման փուլերը՝

միջազգային կազմակերպություններում անդամ պետությունների կոնսոլիդացված դիրքորոշման ձեւավորման ժամանակ համաձայնեցված մոտեցումների մշակում.

դեպի երրորդ երկրներ (երրորդ երկրներից) փոխադրումների կազմակերպման ժամանակ անդամ պետությունների նավահանգիստներում ընթացակարգերի պարզեցմանն ուղղված միջոցների մշակում.

Ներքին ջրային տրանսպորտ

Իրագործման փուլերը՝

Միության շրջանակներում նավագնացության մասին միջազգային պայմանագրի ընդունում.

ներքին ջրային տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների օրենսդրության վերլուծություն՝ ներդաշնակեցման ենթակա ուղղությունների որոշման եւ համաձայնեցման նպատակով.

համաձայնեցված ուղղություններին համապատասխան՝ անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցում.

ներքին ջրային տրանսպորտի նավատորմի նորացման համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով՝ համաձայնեցված միջոցների մշակում եւ ընդունում.

անդամ պետությունների համար ներքին ջրային ուղիներով նավերի անցման կարգի կատարելագործում.

կադրերի պատրաստման ծրագրերի ներդաշնակեցում.

անդամ պետությունների կողմից նավերի եւ կազմակերպությունների անձնակազմերի անդամների վկայականների, դիպլոմների եւ փաստաթղթերի փոխադարձ ճանաչում:

Երկաթուղային տրանսպորտ

«Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության («Միության մասին» պայմանագրի թիվ 24 հավելված) մասին» արձանագրության V բաժնին համապատասխան եւ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերի ու ակտերի վրա հիմնվելով, ինչպես նաեւ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի, Երկաթուղիների համագործակցության կազմակերպության, Միավորված ազգերի կազմակերպության տարածաշրջանային կազմակերպությունների եւ այլ միջազգային (միջկառավարական եւ միջգերատեսչական) կազմակերպությունների աշխատանքի արդյունքները, ինչպես նաեւ երկկողմանի ու բազմակողմանի պայմանագրերը հաշվի առնելով՝ անդամ պետությունները հետեւողականորեն ու

փուլային կարգով իրագործում են երկաթուղային տրանսպորտի ոլորտում համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականություն։ Այդպիսի քաղաքականության հիմնական ուղղությունները հետեւյալն են։

Միասնական տրանսպորտային տարածքի գործունեության համար պայմանների կատարելագործում։

Իրագործման փուլերը՝

գնացքների երթեւեկության կազմակերպման հետ կապված թերությունների վերացման, այդ թվում՝ փոխադրումների համաձայնեցման վերաբերյալ մոտեցումների մշակում ու ընդունում, եւ բեռների փոխադրման կազմակերպման եւ ձեւակերպման ոչ թղթային տեխնոլոգիաների ներդրում.

տեղեկատվության, այդ թվում՝ երրորդ երկրների հետ միջազգային փոխադրման ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին նախնական տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու համար ինստիտուցիոնալ (իրավական) պայմանների ստեղծում, այդ թվում՝ երրորդ երկրների փոխադրողների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց (բեռնառաքողների, էքսպեդիտորների) կողմից անդամ պետությունների փոխադրողներին նշված տեղեկատվության ներկայացում.

սահմանների հատումը դյուրացման, խոչընդոտների վերացման եւ ուղեւորների եւ բեռների անխոչընդոտ տեղափոխման վրա ազդող ընթացակարգերի պարզեցման վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում՝ ուղեւորատար եւ բեռնատար գնացքների ուշացման վրա ազդող պատճառները վերացնելու նպատակով.

երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրման ծառայություններին առնչվող ճկուն սակագնային քաղաքականության իրականացում, այդ թվում՝ անդամ պետությունների տարածքներով երրորդ երկրներից դեպի երրորդ երկրներ բեռների՝ տարանցմամբ փոխադրման ժամանակ անդամ պետությունների փոխադրողների կողմից համաձայնեցված միջանցիկ սակագնային դրույքաչափերի կիրառման միջոցով.

անդամ պետությունների միջեւ միջազգային ուղեւորահաղորդակցության զարգացում.

բարձր հարմարավետությամբ վագոններից կազմված այն գնացքներով ուղեւորային փոխադրումների զարգացման կազմակերպում եւ համաձայնեցում, որոնք շարժվում են երկու կամ ավելի անդամ պետությունների տարածքներով՝ ժամանակացույցի առանձին գծերով.

միջազգային հաղորդակցության մեջ ուղեւորային փոխադրումների որակի բարձրացման, այդ թվում՝ գնացքների երթեւեկության ժամանակացույցի օպտիմալացման, ընթացուղու վրա ստուգման գործառնության վրա ծախսվող ժամանակի կրճատման, շարժակազմի պարկի նորացման միջոցով համատեղ միջոցառումների իրագործում.

անդամ պետությունների միջեւ ճեպընթաց եւ արագընթաց ուղեւորային հաղորդակցության ստեղծման ու զարգացման վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակում եւ ընդունում՝ հաշվի առնելով երկաթուղային տրանսպորտի զարգացման առանձնահատկությունները եւ անդամ պետություններից յուրաքանչյուրի աշխարհագրական դիրքը։

Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների ընդհանուր շուկայի գործունեության համար պայմանների ստեղծում՝ բացառությամբ փոխադրման ծառայությունների եւ ենթակառուցվածքների ծառայությունների.

Իրագործման փուլերը՝

անդամ պետությունների օրենսդրության վերլուծության անցկացում՝ փոխադրման հետ կապված՝ երկաթուղային տրանսպորտի հնարավոր լրացուցիչ ծառայությունները եւ դրանց իրականացման պայմանները որոշելու նպատակով.

Միության շրջանակներում այնպիսի միջազգային պայմանագրերի կնքում (անհրաժեշտության դեպքում), որոնք կանոնակարգում են ազատականացման սկզբունքները (ծառայությունների առեւտրի կարգավորման իրավական հիմքերը, այդ թվում՝ հատուկ տնտեսական միջոցների կիրառումը), փոխադրման հետ կապված՝ երկաթուղային տրանսպորտի լրացուցիչ ծառայությունների մատուցման կարգը եւ պայմանները։

III. Անդամ պետությունների համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրականացման սպասվելիք արդյունքները

Սույն Հիմնական ուղղությունների իրագործումը թույլ կտա ապահովել անդամ պետությունների տրանսպորտային համակարգի անցումը գործունեության որակապես նոր մակարդակի։

Անդամ պետությունների տրանսպորտային համակարգի զարգացմամբ կապահովվի տրանսպորտային ծառայություններում բնակչության եւ տնտեսության կարիքների բավարարումը, ինչպես նաեւ կբարձրացվի անդամ պետությունների տրանսպորտային ենթակառուցվածքի հասանելիությունը։

Տրանսպորտի բոլոր տեսակներն ուղղված կլինեն որակյալ, մրցունակ տրանսպորտային ծառայությունների մատուցմանը, ինչը թույլ կտա էապես մեծացնել տարանցիկ փոխադրումների մասնաբաժինը։

Տրանսպորտային ենթակառուցվածքի վիճակի ընդհանուր բարելավման եւ հեռանկարային զարգացման հաշվին՝ անդամ պետությունների տրանսպորտային միջանցքները գրավիչ կդառնան բեռների եւ ուղեւորների տարանցիկ փոխադրումների համար։

Տարանցիկ ներուժի օգտագործմամբ կապահովվեն անդամ պետությունների եւ դրանց տրանսպորտային կազմակերպությունների բյուջեներ էական ֆինանսական մուտքերը։

Տրանսպորտն առավել հասանելի կդառնա բնակչության համար, տրանսպորտային ծառայությունների արժեքը համաչափ կլինի անդամ պետությունների քաղաքացիների եկամուտների մակարդակին։